

Վ. Գաղափար
Ն. Գաղափար
07.03.2023

Արարատ համայնքի ղեկավար՝

Պարոն Ասլան Ավետիսյանին

«ԱՅԳ» ՖԱ ՀԿ նախագահ՝ Լեոնիդ Ավդիշունից

ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Չարենցի փողոց 1 շ., բն. 6
Հեռ. 077128810

ԴԻՄՈՒՄ


Հարգելի պարոն Ավետիսյան, Արարատ համայնքում ստեղծվել է նոր ֆուտբոլային ակումբ «ԱՅԳ ֆուտբոլային ակումբ» ՀԿ-ն: Այս պահին հաջողությամբ ավարտվել են մարզադաշտի վարձակալության բանակցությունները, որը գտնվում է քաղաք Արարատում: Մարզադաշտն իր չափերով և պայմաններով համապատասխանում է ֆուտբոլային մարզումներ իրականացնելու պայմաններին, սակայն սպորտային ստանդարտներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտություն է առջացել կատարել որոշակի աշխատանքներ, մասնավորապես կատարվում է խոտածածկի վերականգնում, հանդերձարանների վերանորոգում և կհավորում, հարակից և օժանդակ կառույցների վերանորոգում և վերազինում, տրիբունաների բարեկարգում, նստարանների նորոգում, բուժկետի վերականգնում: Ակումբը նախատեսում է ձևով բերել պարապմունքների համար անհրաժեշտ գույք և սաների համար համապատասխան հանդերձանք: Տվյալ պահին կազմավորվել է 7 խումբ 122 սաներից 7-13 տարեկանների համար, որոնք բնակվում են Արարատ համայնքում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Ակումբը ակնկալում է օժանդակություն Արարատի համայնքապետարանից՝ ֆինանսական աջակցության տեսքով: Մասնավորապես Ակումբի զարգացման ծրագիրն Արարատ համայնքում իրագործելու համար Ակումբը խնդրում է տրամադրել 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն:

Ակումբը պարտավորվում է համայնքապետարանին ներկայացնել հաշվետվություն՝ տրամադրված աջակցության օգտագործման վերաբերյալ:

«ԱՅԳ» ՖԱ ՀԿ նախագահ՝

06.03.2023թ



Լեոնիդ Ավդիշուն

07 03 2023 098/3